

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎՆԱՍՎԱԾՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԾՈՎ
ԿԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

ՅՈՒ. Ի. ՄԿՐՏՉՅԱՆ

Աշխատանքային դատավարական իրավահարաբերությունը սերտորեն կապված է նյութական իրավահարաբերությունների հետ, որոնցից բխող վեճերը ենթակա են ինչպես միջև դատական, այնպես էլ դատական քննարկման ու լուծման: Դրա համար էլ այն հարցը, թե աշխատանքային վեճերի քննարկման ժամանակ ծագած հարաբերությունները իրավունքի որ ճյուղով պետք է կարգավորել, կարելի է լուծել միայն նյութական և դատավարական իրավահարաբերությունների հարաբերակցության ճիշտ պարզաբանմամբ:

Կ. Մարքսը նշում էր, որ «նյութական իրավունքը... ունի իր անհրաժեշտ, իրեն յուրահատուկ դատավարական ձևերը... Դատավարությունը և իրավունքն առկա են սերտ և կապված միմյանց հետ, ինչպես, օրինակ, բույսերի ձևերը կապված են բույսերին, իսկ կենդանիների ձևերը՝ կենդանիների մսի և արյան հետ: Միևնույն ոպին պետք է կենդանյացնի դատավարությունը և օրենքները, քանզի դատավարությունը օրենքի կյանքի ձևն է միայն, հետևաբար և նրա ներքին կյանքի արտահայտությունը»¹:

Ինչևհետև այս ճշմարտությունից, դտնում ենք, որ աշխատանքային վեճերի քննարկումը պետք է կարգավորվի աշխատանքային դատավարության միջոցով: Ուստի շենք կարող համակարծիք լինել այն հեղինակներին, որոնց կարծիքով քաղաքացիական դատավարական իրավունքն ընդգրկում է իրավունքի նորմեր, որոնք կարգավորում են ոչ միայն դատարանի, այլև քաղաքացիական օրենսդրության հիմունքների 6-րդ կետում մատնանշված մընացած մարմինների գործունեությունը²: Ճիշտ չէ այն դրույթը, որ քաղաքացիական դատավարության մասին օրենսդրությունը սահմանում է ինչպես քաղաքացիական, այնպես էլ այլ իրավահարաբերություններից բխող վեճերով գործերի քննարկման կարգը: Նման վիճակն առաջ է բերում մի շարք քաղաքական երևույթներ:

Քաղաքացիական գործերի լուծման ժամանակ դատարանի կողմից կիրառվող իրավունքի յուրաքանչյուր նյութական ճյուղի առանձնահատկությունները պայմանավորված են միայն իրենց յուրահատուկ դատավարական կանոններով: Դրա համար էլ քաղաքացիական դատավարական իրավունքը քաղաքացիական դատավարության ընդհանուր կանոնների և սկզբունքային գրույթների հետ մեկտեղ պարունակում է նաև տարբեր նորմեր, որոնք կիրառելի են միայն աշխատանքային, կոլտնտեսային և այլ գործերի

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. I, стр. 158.

² Н. Б. Зейдер. Предмет и система Советского гражданского процессуального права («Правоведение». 1962, № 3, стр. 71).

լուծման դեպքում³։ Քաղաքացիական դատավարությունում նման նորմերի կոտակումը չի համապատասխանում նրա առաջ դրված խնդիրների ճիշտ և արագ լուծմանը, բարդացնում է քաղաքացիական դատավարությունը, այն անմատչելի դարձնում պրակտիկ աշխատողների մեծամասնության և քաղաքացիների համար։

Մյուս դժվարությունն առաջ է գալիս աշխատանքային և այլ վեճերի գերատեսչական ենթակայության հարցը լուծելիս։ Այսպես, ընդհանուր կարողը այն մասին, որ աշխատանքային վեճերը ենթակա են դատարանի քրե-նարկմանը, եթե կայացվել է ֆաբրիկա-գործարանային տեղկոմի (ՖԳՏԿ) որոշում, ունի մի շարք բացառություններ⁴։

Դատարանի կողմից միայն աշխատանքային վեճերի լուծման ժամանակ կիրառվող մի շարք դատավարական նորմեր կան ինչպես քաղաքացիական դատավարության և աշխատանքային օրենսդրության հիմունքներում, այնպես էլ միութենական հանրապետությունների քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերում և այլ նորմատիվ ակտերում⁵։

Աշխատանքային իրավունքի դատավարական նորմերի նման ցրումը չի օժանդակում աշխատանքային և իրավունքի այլ ճյուղերի ներքին կյանքի ոգու դրսևորմանը և աշխատանքային իրավահարաբերության կողմերի շահերին։

Ուստի արդեն ժամանակն է քաղաքացիական դատավարությունն անջատել աշխատանքային, ընտանեկան, կոլտնտեսային և այլ դատավարություններից, որոնք փաստորեն գոյություն ունեն և ամրապնդված են տարբեր նորմատիվ ակտերում։ Իրավունքի մյուս ինքնուրույն ճյուղերի նման նրանք ևս ունեն իրենց առարկան և կարգավորման մեթոդը։ Օրինակ, աշխատանքային դատավարության կարգավորման առարկա են աշխատանքային վեճերը քննարկող մարմինների և դատավարության մյուս մասնակիցների միջև գոյություն ունեցող հասարակական աշխատանքային հարաբերությունները, որոնք առաջ են գալիս այդ վեճերը քննարկող և աշխատանքային գործերը լուծող մարմինների գործունեության ընթացքում։ Աշխատանքային դատավարության մեթոդ կարող է հանդիսանալ դատավարության մասնակիցների աշխատանքային վեճերի քննարկումը և լուծումը՝ աշխատանքային վեճեր քննարկող մարմինների միջոցով։

Աշխատանքային դատավարական իրավահարաբերության բովանդակությունը կազմում է նրա սուբյեկտների փաստացի փարբագիծը, որն իրագործվում է նրանց իրավունքների և պարտականությունների հիման վրա։ Հետե-

³ В. Н. Щеглов, Гражданское процессуальное правоотношение, М., 1966, стр. 149—150.

⁴ Ст. ст. 10, 11, 34. Положения о порядке рассмотрения трудовых споров и другие нормативные акты.

⁵ Տե՛ս 1961 թ. դեկտեմբերի 22-ի ՍՍՄՄ Մինիստրների սովետի աշխատանքի և աշխատավարձի հարցերի պետական կոմիտեի և ՀԱՄԿԿ-ի նախագահության հաստատած «Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կողմից բանվորներին և ծառայողներին, նրանց աշխատանքի հետ կապված, խեղություններ կամ առողջության այլ վնասվածքով պատճառած վնասի փոխհատուցման կանոնները» և ՖԳՏԿ կանոնադրությունը՝ հաստատված 1970 թ. հուլիսի 15-ի ՍՍՄՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով («Охрана труда», М., 1971, стр. 231—236).

վարար ժամանակն է ստեղծել աշխատանքային դատավարության ճյուղ, որն աշխատանքային վեճերի կարգավորի նրանց քննարկման բոլոր փուլերում:

Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել նաև այն, որ աշխատանքային վեճերի գերակշռող մեծամասնությունը հասարակայնորեն իրականացվում է դատավարական հարկադրանքի ձևեր ունեցող իրավական նորմերով:

Աշխատանքային դատավարության ստեղծումը դեռևս չի խոսում այն մասին, որ աշխատանքային վեճերը պետք է հանել ընդհանուր դատարանների քննարկումից, ինչպես այդ կատարվում է մի շարք սոցիալիստական և կապիտալիստական երկրներում⁶, Ելնելով ֆինանսական նկատառումներից, կարծում ենք, որ ընդհանուր դատարաններում քրեական և քաղաքացիական պորժերի նման աշխատանքային վեճերի քննարկումը աշխատանքային դատավարության նորմերի հիման վրա չի խանգարի արդարադատության իրագործմանը:

Իրավաբանական գրականության մեջ տարբեր կարծիքներ կան արտագործյան հետ կապված վնասի փոխհատուցման ժամանակ տուժողի պահանջի քննարկման գործող կարգի փուլերի մասին:

Հեղինակների մի մասը նշում է, որ վնասի փոխհատուցման վերաբերյալ վեճերի լուծումը ՖԳՏԿ-ում և դատարանում բաժանվում է երկու ինքնուրույն փուլի և հերքում հակառակ կարծիքը⁷, Հեղինակների մյուս խումբն առհասարակ չընդունելով փուլայնությունը, գտնում է, որ ձեռնարկության վարչության, ինչպես նաև ՖԳՏԿ-ի մարմինները և դատարանը լրիվ լուծում են վնասի փոխհատուցման վեճերը⁸, Դա գործող դատավարական նորմերի սխալ մեկնաբանում է, քանի որ օրենքը վեճերի քննարկման գործում ձեռնարկության վարչությանը նման իրավագործություն չի վերապահում, որովհետև որպես կողմ նրա շահագրգռվածությունը խախտում է օբյեկտիվության սկզբունքը:

Այս հարցի ճիշտ լուծումն աշխատանքային դատավարության կոնկրետացման և պարզեցման գործում ունի կարևոր տեսական և պրակտիկ նշանակություն:

Փուլայնության հարցը կարելի է քննարկել երկու առումով:

Առաջին, անվիճելի է, որ վնասի փոխհատուցման վերաբերյալ հարցերի քննարկման փուլերը պետք է համարժեք լինեն այդ հարցերը լուծող մարմինների թվին, որոնք երեքն են՝ ձեռնարկության վարչություն, ՖԳՏԿ և դատարան: Հետևաբար, առաջին առումով գոյություն ունեն քննարկման և լուծման երեք փուլեր, որոնք ըստ էության բնութագրվում և միմյանցից տարբերվում են հատուկ վարույթով:

Երկրորդ, վնասի փոխհատուցման հարցի քննարկումը կարծում ենք ունի երկու փուլ, որը կարելի է բացատրել ինչպես տուժողի դիմելու ձևով (պահանջ և բողոք), այնպես էլ վարույթը սկսելու (տուժողի պահանջի կամ բո-

⁶ В. К. Мионов, Трудовое право еврейских социалистических стран, М., 1963, стр. 215; А. Солин, Регулирование трудовых конфликтов во Франции («Советское государство и право», 1972, № 9, стр. 120—125).

⁷ В. Ю. Некрашас, Основные вопросы рассмотрения споров о возмещении вреда, причиненного производственной травмой или профессиональным заболеванием, автореф. дис. на соискание ученой ст. канд. юридич. наук, Вильнюс, 1967, стр. 5.

⁸ Л. Мажданек, Защита в суде прав граждан, получивших увечье («Советская юстиция», 1968, № 1, стр. 17).

զորքի) հիման վրա, որն ըստ էության նույնն է։ Այստեղից էլ անհրաժեշտություն է առաջանում հստակորեն տարբերել «պահանջ» և «բողոք» հասկացությունները։

Չնայած «պահանջ» և «բողոք» հասկացությունների արտաքին նմանությունը, նրանք միմյանցից խիստ տարբերվում են։

Պահանջը՝ տուժողի հավակնության սկզբնական ձևն է ձեռնարկության վարչությանը դիմելու դեպքում և ուղղված է իր սուբյեկտիվ իրավունքների վեճականգնմանը, որը որպես կանոն կարող է լուծվել համաձայնությամբ։

Բողոքը՝ վնասի փոխհատուցման վերաբերյալ աշխատանքային վեճեր քննարկող մարմիններին դիմելու ձև է, երբ կողմերը համաձայնության չեն եկել։ Հետևաբար, պահանջն առաջնային է, իսկ բողոքը՝ երկրորդային։ Ձեռնարկության վարչությանը ներկայացվող դիմումը պահանջ է և ոչ թե բողոք, իսկ տուժողի կողմից օրենքով սահմանված կարգով ՖԳՏԿ-ին և դատարանին դիմելը՝ բողոք է ընդդեմ նախորդ մարմնի գործունեության։

Իրավաբանական գրավանության մեջ և պրակտիկայում պահանջի և բողոքի հասկացության նման կարգը նոր չէ։ Համանման կարգ է սահմանված մատակարարման և երկաթուղային փոխադրումների պայմանագրերից ծագող վեճերի դեպքում։

Պահանջ և բողոք հասկացությունների նման սահմանադատումն անհրաժեշտ է, քանի որ վնասի փոխհատուցման վերաբերյալ վեճերի քննարկման հարցում գործող նորմատիվ ակտերում չկա որևէ ցուցում այդ մասին։

Վերոգրյալի հիման վրա վնասի փոխհատուցման հարցերի քննարկման երկփուլայնությունը պետք է բնութագրել որպես հարցերի լուծում համաձայնությամբ (ձեռնարկության վարչության միջոցով) և լուծում բախման կարգով (ՖԳՏԿ-ի և դատարանի միջոցով)։ Վնասի փոխհատուցման վերաբերյալ հարցերի լուծման այս երկու եղանակները միմյանցից տարբերվում են իրավական կարգավորման մեթոդով։

Հետևելով Ս. Բրատուսի առաջարկած հայտնի մեթոդին⁹, անհրաժեշտ է առաջին եղանակը դասել «հորիզոնական», իսկ երկրորդ եղանակը՝ «ուղղահայաց» հարաբերությունների շարքը։

Արտադրությունում բանվորների և ծառայողների առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հարցերի լուծման նման եղանակներն ունեն կարևոր գիտական և պրակտիկ նշանակություն։ Դրանք մեթոդի տեսանկյունից հնարավորություն են տալիս պարզելու իրավական նորմերի և իրավահարաբերությունների առանձնահատկությունները և ընդգրկում վնասի փոխհատուցման վերաբերյալ փորձերի երկփուլ քննարկման և լուծման հետ կապված բոլոր իրավահարաբերությունները։

Վնասի փոխհատուցման վերաբերյալ վեճերը քննարկող մարմինները, բացի կողմերի՝ օրենքով սահմանված իրավունքներին և պարտականություններին վերաբերվող հարցերի ճիշտ լուծումից, պետք է ուշադրություն դարձնեն նաև արտադրական վնասվածությունը նպաստող պայմաններին ու զորանց պատճառների բացահայտմանն ու նախապահպանությանը։

ՖԳՏԿ-ն և դատարանը վնասի փոխհատուցման վեճերը լուծելիս հետադաշտում տվյալ ձեռնարկությունում արտադրական վնասվածությունը լրիվ

⁹ С. Братусь, Об основах гражданского законодательства Союза ССР и союзных республик («Советская юстиция», 1962, № 2, стр. 3).

կանխելու համար պետք է վնասի փոխհատուցման վերաբերյալ վիճելի հարցերի քննարկման ժամանակ հայտնաբերված օրինականության խախտման կամ այլ իրավախախտումների մասին տեղյակ պահան համապատասխան մարմիններին և անձանց:

Սակայն դատական պրակտիկան ցույց է տալիս, որ ինչպես մինչև կանոնների ընդունումը, այնպես էլ հետո նման նախաձեռնություն հազվադեպ է ցուցաբերվում¹⁰:

Մեր կարծիքով դրա պատճառն այն է, որ վերադաս և հսկողական կազմակերպություններն այդ մարմինների նկատմամբ պահանջկոտ չեն, որը փաստորեն հանգեցնում է նրանց դերի նսեմացմանն արտադրական վնասվածության կանխման գործում: Անհրաժեշտ է ընդունել որոշակի պատասխանատվություն առաջ բերող հատուկ իրավական նորմ: Դա կբարձրացնի վնասի փոխհատուցման վերաբերյալ վիճելի հարցերը քննարկող, բայց հատուկ նախաձեռնություն չցուցաբերող մարմինների պատասխանատվությունը իրենց վերադաս այն հսկողական կազմակերպությունների առջև, որոնք ստանալով ուղարկություն չեն դարձրել նախապահականության ու արտադրական վնասվածության կանխման հարցերին:

Իրավաբանական դրականության մեջ հաճախ արտադրական վնասվածության կանխում և նախապահականություն ասելով հասկանում են ոչ թե փոխառ դեպքի փաստի հայտնաբերումն ու այդ մասին համապատասխան մարմիններին և անձանց հայտնելը, այլ ուղղակի արտադրական վնասվածություն ծնող պատճառների և պայմանների պարզումը և այն վերացնելու դործում գործնական ու կոնկրետ միջոցառումների ձեռնարկումը: Այդ նպատակով իրավաբանական դրականության մեջ առաջ են քաշվել բազմաթիվ առաջարկություններ՝ ուղղված վնասի փոխհատուցման վերաբերյալ վիճերը քննարկող մարմիններին¹¹:

Այդ առաջարկությունների գերակշռող մեծամասնությունը դեռևս չի իրագործվում այնպիսի պատճառներով, ինչպիսիք են այդ հարցերի ենթակայության ոչ ճիշտ լուծումը, ոչ պրակտիկ լինելը, իրավախախտման օբյեկտների բաղմատեսակությունը, տնտեսական և ֆինանսական կարգի դժվարությունը, այդ մարմինների արտակարգ ծանրաբեռնվածությունը, դատավորների և հասարակական ու պաշտոնատար անձանց ձեռնահաս չլինելը և այլն:

Վնասի փոխհատուցման վերաբերյալ վիճելի հարցերը քննարկող մարմինների աշխատանքն արտադրական վնասվածությունը նախազգուշացնելու և կանխելու գործում պետք է տարվի ոչ թե վնասվածության փաստերը ծնող պատճառների և պայմանների պարզաբանման ուղղությամբ, այլ բացահայտված փաստի արձանագրմամբ: Վնասի փոխհատուցման վերաբերյալ վիճելի հարցերը քննարկող մարմինները ոչ բոլոր դեպքերում է, որ ի վիճակի են լրիվ և ճիշտ բացահայտել արտադրական վնասվածությանը նպաստող պատճառները և պայմանները, բայց նրանք կարող են արտադրական վնասվածության բացահայտված փաստի արձանագրման միջոցով դրա վրա հրավիրել այդ նպատակով ստեղծված մարմինների ուղարկությունը:

Վնասվածքների և առողջության քայքայման պատճառների բացահայ-

¹⁰ ՏՏ՝ «Советская юстиция», 1961, № 3, стр. 8—9; 1964, № 11, стр. 10—11.

¹¹ «Советская юстиция», 1964, № 11, стр. 10—11.

տումը վնասի փոխհատուցման վերաբերյալ վեճերը քննող մարմինների համար այնքանով են կարևոր, որքանով դրանք նպաստում են վնասը պատճառողի մեղքի ապացուցմանը: Բայց այդ պատճառները կարող են բավարար լինել աշխատանքի պաշտպանության գործում գոյություն ունեցող իրավախախտումների վերացման էական նախապահպանության համար: Ըստ երեվոյթին, ելնելով հատկապես այդ նկատառումներից, քաղաքացիական դատավարության հիմունքներով (հոդված 38) դատարանների պարտականությունների մեջ են մտցվել մասնավոր որոշում կայացնելը և համապատասխան մարմիններին և անձանց հայտնելը: Ուստի, վնասի փոխհատուցման վերաբերյալ վիճելի հարցերը քննարկող մարմինները արտադրական վնասվածությունը լրիվ կանխելու գործում իրենց պարտքը կատարած կլինեն, եթե դժբախտ դեպքի փաստը հայտնաբերելով՝ այդ մասին տեղյակ պահեն համապատասխան մարմիններին և այն անձանց, որոնք պարտավոր են տվյալ ձեռնարկությունում արտադրական վնասվածությունը նպաստող պատճառները և պայմանները վերացնել և վիճելի հարցերը քննարկող մարմիններին հալանել այդ ուղղությամբ իրենց ձեռնարկած միջոցառումների մասին: Աշխատանքի պաշտպանության գործում իրավախախտումները կանխելու և վերացնելու նպատակով յուրաքանչյուր մարմնի գրաված տեղի մասին նման խիստ հարցադրումը բավական կուժեղացնեի նշված իրավախախտումների դեմ տարվող պայքարը, կբարձրացնեի այդ մարմիններից յուրաքանչյուրի պատասխանատվությունը, տեղի չէր ունենա ձեռնարկությունների օպերատիվ-տնտեսական գործունեության միջամտում:

Արտադրական վնասվածությունը կանխելու և վերացնելու գործում կարևոր է վնասի վերաբերյալ վեճերի հրապարակային քննարկումը: Ա. Ավանեսովին, Դ. Կուրսկուն և Ա. Յուրուպային հասցեագրված հեռախոսագրում Վ. Ի. Լենինը նշել է. «Սկզբունքի տեսակետից անհրաժեշտ է նման դործերը չթողնել բյուրոկրատական հիմնարկությունների սահմաններում, այլ հանձնել հրապարակային դատի ոչ այնքան խիստ պատժի համար (հնարավոր է, որ բավարար կլինի և նկատողությունը), այլ հանրային հրապարակման և մեղավորների անպատժելիության համընդհանուր համոզմունքը փշրելու համար»¹²:

Լենինյան այս ցուցումները լիովին կիրառելի են նաև վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերը քննարկելու ժամանակ: Վնասի փոխհատուցման վերաբերյալ վիճելի հարցերի հրապարակային քննարկումը աշխատանքի պաշտպանության բնագավառում իրավախախտումները կանխելու գործում օգտակար կլինեի և՛ ձեռնարկության վարչության, և՛ բանվոր-ծառայողների համար: Բացի դրանից, այդ մարմինների կողմից վիճելի հարցերի հրապարակային քննարկումն առհասարակ կբարձրացնեի վնասի հատուցման վերաբերյալ վեճերի քննարկման որակը¹³: Ուստի նախազգուշողական նկատառումներից ելնելով, ժամանակն է ընդունել հատուկ դատավարական իրավական նորմ, որպեսզի վնասի փոխհատուցմանը վերաբերող վեճերը քննարկվեն դոնբաց նիստերում՝ ներգրավելով համապատասխան ձեռնարկության կոլեկտիվի անդամներին և պաշտոնատար անձանց:

¹² В. И. Ленин, Поли. собр. соч., т. 54, стр. 71.

¹³ См. Е. Смоленцев, В борьбе за качество рассмотрения гражданских дел («Советская юстиция», 1964, № 17, стр. 11—12).

Մինչև այժմ նման հարցադրումը թե՛ վերադաս դատարանների կողմից¹⁴, թե՛ իրավաբանական դրականության մեջ¹⁵ նշվում էր առաջարկության ձևով: Սակայն, հաշվի առնելով, որ պրակտիկայում այդ առաջարկությունները համարյա չեն կիրառվում, նորմատիվ կարգով նման նորմի ամրապնդումը դարձել է անհրաժեշտություն: Դա շատ բանով կնպաստի արդյունաբերության և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում վնասվածության վերացման գործին: Վնասի փոխհատուցման վերաբերյալ վեճերի քննարկման նշված և այլ դատավարական պրոբլեմները¹⁶ պահանջում են անհրաժեշտ դիտական և պրակտիկ լուծում, որը կնպաստի վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերի էլ ավելի օբյեկտիվ ու լրիվ լուծմանը, ինչպես նաև արտադրական վնասվածության դեպքերը կանխելուն:

Այս պրոբլեմները կարելի է լուծել էֆեկտիվ իրավական նորմերի միջոցով, որոնք պետք է տեղ գտնեն ապագա աշխատանքային դատավարության մեջ: Իրավական նորմերի էֆեկտիվություն ասելով պետք է հասկանալ ոչ թե արդյունքը, այլ արդյունքի և սոցիալական նպատակի միջև գոյություն ունեցող հարաբերակցությունը, որն ընկած է իրավական կարգավորման հիմքում¹⁷: Միայն այդ դեպքում հասարակական զարգացման օրենքների իմացության հիման վրա կարելի կլինի կատարելագործել վնասի փոխհատուցման վերաբերյալ վեճերի լուծման դատավարական ձևերը և ապահովել դատավարական օրենսդրության բարձր մակարդակ:

СОВЕРШЕНСТВОВАНИЕ ПРОЦЕССУАЛЬНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА ПО ТРУДОВЫМ УВЕЧНЫМ ДЕЛАМ

Ю. Д. МКРТЧЯН

Резюме

Процессуальный порядок, разрешающий трудовые споры о возмещении ущерба в связи с повреждением здоровья работника на производстве, имеет ряд проблем научного и практического характера, требующий правильного решения. Разрешение данного вопроса зависит от правильного выяснения соотношения материальных и процессуальных правоотношений. В соответствии с марксистским пониманием неразрывной связи права и процесса рассмотрение трудовых споров должно регулироваться новой отраслью права — трудовым процессом, что диктуется не только природой рассматриваемых правоотношений, но и скоплением в гражданском процессе чужеродных по духу правовых норм.

¹⁴ «Советская юстиция», 1967, № 15, стр. 27.

¹⁵ «Социалистическая законность», 1967, № 7, стр. 3—11.

¹⁶ К. Ю д е л ь с о н, Процессуальные вопросы судебного рассмотрения дел о возмещении вреда («Советская юстиция», 1964, № 17, стр. 12—14).

¹⁷ В. И. Н и к и т и н с к и й, Эффективность норм трудового права, М., 1971, стр. 24.

Существуют различные мнения по вопросу о стадиях действующего порядка рассмотрения притязаний потерпевшего при возмещении ущерба. Вопрос о стадийности можно рассмотреть в двух аспектах: исходя из действующих органов, рассматривающих эти вопросы, и из самостоятельности процессуальных форм производства дел в этих органах; в первом аспекте существуют три, а во втором — две стадии рассматриваемого порядка.

Исходя из ленинских указаний о публичной огласке и разрушении всеобщего убеждения о ненаказуемости виновных, необходимо принять специальную процессуальную правовую норму, обязывающую органы, рассматривающие споры о возмещении ущерба, проводить свои заседания только в открытом порядке, с участием широкой общественности. Это приведет к более качественному рассмотрению указанных дел и повысит требовательность и профессиональное мастерство лиц, заседающих в конфликтных органах.